# ՀԱՅՐԵՆԻՔ

40 ՓԱՐԱ — ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹ — 40 ՓԱՐԱ

Կը հրատարակուի ամեն Կիրակի օրեր: Տարեկանն է կանխիկ Ա. տարիձանի բաժանորդագրութեան համար մէկ օսմանեան ոսկի - իսկ Բ. տարիձանի համար կէս օսմանեան-ոսկի. Դուրս գաւառներու ծախքը առանձին վճարելի է. Երկու շաբաթ անցած թիւեր կը ծախուին 3 դր. է: Եւրոպական քաղաքաց համար 30 Ֆրանք: Հատը 40 փարա:

Նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել առ Խմբագիր-Տնօրէն Մ. Գափամաճեան Զինճանճըլար Եօգուշու Եսայեանց խան թիւ 6 Կ. Պոլսոյ Տպարանը կամ Գալաթ կարու չրախճառ Փօղոս եւ Յակոբ աղայից խանութը: Անվճար թղթ-եր նամակ կը մերժուին. Ձեռագիր եւ չի դարձուիր: Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 դր. է: Աւելի անգամներու համար սակարկութիւն կըլլայ:

ԹԻՒ 12 — ԿԻՐԱԿԻ — 1887 ՍԵՊՏԵՄԲԵՐ 6


## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Ազգ. Տեսութիւն. — Սահմանի կենսագիրն. — Ձմեռնային գործեր. — Գաւառական (Հայաստան առաջին քրիստոնեայ երկիրը). — Ճշմարտութիւն ՚ի Թուրքիա. — Զուարճալիք. — Ազգ. լուրեր. — Ամուսնութիւն. — Նոր հրատարակութիւն. — Վիճակ մը Փրուսիա-Ռուսաստանը գրեթէ ձեւով:


## ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ,

Ազգ. Ժողովոյ վերջին նիստը (28 օգոստ.) այնքան աղմկալի՝ գրեթէ նշմարան ապացոյցն եղաւ, մինչդեռ կրնար օգտակար ըլլալ, եթէ փոխանակ կուսակցական կռիւ՝ խօսէր միայն Ազգի շահը:

Մեր յարգելի Երեսփոխան Տեարք երբ թող են երեսփոխանական աթոռոց վրայ, պարտին յիշել թէ ներկայացուցիչ Հայ-Ազգին Երեսփոխաններն են իրենք:

Երբ այս անտարբերութեամբ ընթանան խօսելով պաշտօն — զոր կ'առանձնեն մանաւանդ ազգ. ատենապետ — ՚ի Հայրէ յանձնած վերջ ինչ պէտք կ'զգան խօսելու առաջարկին չունեցան. Համար այն ժամեր, որ տրուած են Ազգային ընդհանուր օգտի, և վերջապէս ժամեր, յորս պէտք է քննուին և որոշուին կենսական հարցեր:

Մեր այս դիտողութենէ անշուշտ չհետեւիր թէ Ազգ. Ժողովոյ մէջ միաբանութիւն ըլլալու չէ:

Ազգ. Ժողովը խաղաղ և վիճաբանող ժողով է:

Ի Հարկէ պէտք վիճաբանի այն խնդիրներու վրայ՝ որք օրինական քննութեան կարօտ համար առաջարկուին:

Սակայն, խոստովանելի է որ խօսիլ, բայց որչափ կարելի է կարճ, առանց կուսակցական կռիւ, առանց անձնականութեան, առանց կրքոտութեան, առանց անվայել խօսքերու, և ժամավաճառութեան և առանց նախատական յարձակումներու:

Այնչափ կամ առաւել չէ Քաղաքական Ժողովոյ Խորհրդոյ գործին վրայ դիտողութիւն ընել, որ այնքան պէտք էր ընդունիլ փոփոխութեան և առանց միութեան անհրաժեշտութեան, վասն զի մենք ալ կընդունինք թէ ոչ նաւավար կարենալ փորձառու և կարող անձանց անունները գրել մտադրած են յիշել բանիւ:

Բայց երբէք չենք կրնար հաւատալ թէ մասնաւոր գիտութեան պէտք ենք լինել:

Մենք ալ եթէ քիչ շատ ազգային կեանքի փորձառութիւն ունինք, կըրցած ենք գիտնալ թէ կարգ մը կարող, փորձառու, ազնուական գործունեայ և գիտուն անձերը յարգելի անձնաւորութիւնք գտնուեցան իրենց կոչման ազգային պաշտօններէ (1):

Պատճառ չենք կրնար բանալ թէ յարգելի չէ, որովհետեւ ամեն մանկական տրուած չէ Ազգին ծառայելու համար նախնական-ժամանակ կորսնցնելու, գործէ մնալ, դժկամութիւն ընել յորդոր, և միանգամայն իր անունը նախատանաց և յարձակմանց գոհ ըլլալ:

Գիտելի է որ ծոյլը ոչ նախնական վարձատրութիւն կայ, ոչ պատիւ ու ոչ փառք:

(1) Մխիթարական է սակայն որ ուրիշ կերպ ծառայութիւններ կ'ընեն:

Ասոր պարզիք դժբախտ պատճառն համար է որ կարող մարդոց սով կը տիրէ մեր մէջ, և սակայն ցաւալի է որ սոյն թագաւորն ձրիապաշտութեան առաջ կան որ առկային չեն ուզեր համակրիլ և թէ յախուռն յարձակումներ — որով քննադատութիւն սնունդ կուտան հասարակ՝ ամէն կուսակցական Ազգ. Ժողովոյ մէջ և թէ դրական հրապարակի վրայ:

Ցաւալի է թէ մեր այս արդարացի դիտողութիւնները չկրցաւ բերել բուրմ և պարկեշտ լեզուաւ քննադատութեան, զոր երբեք պէտք չէ շփոթել յախուռն յարձակման հետ, որ քանդելու մեր կարողութեանց ու մեր վիճակին:

Կարգութիւն և վիճակի ըմբռնել չունենք պարզապէս:

Գաւառներէն քիչ չենք ուզեր, բայց խոհականութիւն ալ չենք ուզեր մոռնալ:

Գաւառաց վիճակն ես քան զիս կը վայելեմ:

15 ի մէջ ընդարձակ գաւառներ անհամար ու անտարաշխարհ վիճակի մէջ կը գտնուին, և եկեղեցական Հարք չեն ուզեր դառն ազնուական պաշտօնի երթալ:

Գիրքին միայն մէկ երկար չկարդանք, սպասենք, չհամարձակինք դատապարտել զանոնք թէ իրենց կոչման չեն ծառայեր, այլ հարցնենք թէ ինչու չեն երթար:

Երբ այդ հարցումը ընենք, մասնաւոր բան մը կը գտնենք:

Չեն ուզեր երթալ, ոչ թէ Աստուծոյ ափոյնքէ հեռանալու չուզելու համար, այլ չեն ուզեր երթալ, որովհետեւ գործելու և օգտակար հանդիսանալու համար ի դառնալ միջոցներ չունին ու կամ բնաւ չկան:

Այս կենսական խնդրոյ վրայ Լոյսի և Պատկեր–Հայ–Կենացի մէջ ստէպ գրուած ու գործնական փաստերով հաստատած ենք թէ՝ ունինք 65 ի չափ գաւառներ, յորս կը գտնուին բազումք որ աղերսայ վարդապետ մ'անգամ պահելու անկարող են, բայց ամենն ալ զատ զատ առաջնորդութիւններ կը կազմեն, և սակայն 10 ը գաւառ հազիւ կը գտնուի առաջնորդ մը պահելու կարող։

Լսեցանք պահ մը թէ յատուկ Յանձնաժողով մը կազմուած է առաջնորդական վիճակաց կազմակերպութեան համար, բայց չգիտենք այդ կարևոր Յանձնաժողով կը շարունակէ՞ իւր պաշտօնն և թէ ի՞նչ արդիւնք ունեցած է։

Մեծ կերպով օգտակար է որ այս կենսական խնդրոյ ժամ առաջ ստանայ իւր օրինաւոր լուծում, որովհետև 'ի գաւառս ազգային վիճակի բարւոքմունք ասոր կախում ունին։

Եթէ կը փափագի այդ Յանձնաժողով որ մեր Առաջնորդք զօրաւոր ու ազդեցիկ դիրք ունենան, եթէ կը փափաքի որ կրթութեան գործն 'ի գաւառս մղում ստանայ, եթէ գաւառաց վիճակն ստուգիւ իւր հոգածութեան արժանի է, և եթէ կը փափաքի որ հիմնական օգուտ մ'ըլլայ գաւառաց, պարտի այդ Պատ. Յանձնաժողով ընդ հուպ պատրաստել իւր ծրագիր, եթէ տակաւին չէ պատրաստած, որովհետև Յանձնաժողովոյ մէջ կան այնպիսի անձինք, որ կատարեալ փորձառութիւն և խիստ մօտէն տեղեկութիւն ունին գաւառաց տեղական պիտոյից ու պահանջմանց։

Տուր գաւառաց պէտք եղած վարչական կազմակերպութիւնը և տես թէ տակաւ առ տակաւ ո՛րքան փոփոխութիւն կը կրեն դէպ 'ի լաւն։

Առանց դրութիւնը փոխելու՝ բարւոքում յուսալը կատարեալ յուսախաբութիւն է։

## ՕՏԵԱՆԻ ԿԵԱՆՔԷՆ

Այս մեծ մարդուն գրական գործունէութիւնը շատ կանուխէն կ'սկսի, ինչպէս և իւր ազգային կեանքը։

Բայց մենք շատ հեռուն երթալ չենք ուզեր. բաւական է միայն ըսել թէ Օտեանց Իւսկիւտարի բնակարանը կարծես ակադէմիա մ'էր, ուր ստէպ կը հաւաքուէին նշանաւոր գրագէտներ։

Օտեան իւր գրական գործունէութեամբը մեծապէս նպաստած է Սահմանադրութեան հաստատմանը՝ գրելով Մեղուի մէջ կարգ մը յօդուածներ, որ թէպէտ անստորագիր՝ այլ շատեր գիտէին թէ իւր – Օտեանի – գրչէն ելած են, և որք հիացում կը պատճառէին մանաւանդ նորահաս սերնդեան։

Օտեան դեռ 28 տարեկան՝ մի քանի թաղերէ Երեսփոխան ընտրուեցաւ 1863ին և Ատենադպիր եղաւ քուէից բացարձակ առաւելութեամբ։

Բարեյիշատակ Պօղոս Պատրիարք երբ կատարեց իւր ուխտն սահմանադրական, Օտեան առաջին խօսքն առաւ, յանուն Երեսփոխանական Ընդհանուր Ժողովոյ շնորհաւորեց զնա իբր Ա. սահմանադրական Պատրիարք և իւր յատուկ պերճախօսութեամբն յիշեցուց պարտիքը սահմանադրական Պատրիարքի։

Համայնից վրայ խոր տպաւորութիւն գործեց Օտեան'ի բանախօսութիւնը, որ նոյն շաբթուն հրատարակուեցաւ Մասիսի մէջ, զոր ձեռքէ ձեռք կը պըտըտցնէին և կը կարդային անյագաբար։

Օտեան երբ կը խօսէր իբր Երեսփոխան ընդհանուր ժողովին մէջ, հիացմամբ և գոգցես ապշութեամբ կ'ունկնդրէին, զի ունէր մասնաւոր ոճ մը գրաւիչ, դիւթիչ և յանկուցիչ։

Ամենուն տրուած չէր ընդդիմախօսել, թէև նոյն ատեն խօսելու կարող – միայն խօսած ըլլալու համար խօսք ընող չը հասկցուի – նշանաւոր Երեսփոխանք բազմաթիւ էին։

Քիչեր և այն ալ քիչ անգամ միայն իրեն ընդդիմախօս լինելու պատիւը կը կունենային, այլ ոչ ոք կը հաւասարէր իւր պերճախօսութեանը։

Օտեան չէր խօսեր շարունակ ամեն խնդրոյ վրայ. կը խօսէր 'ի հարկին – զի չունէր խօսելու մենամոլութիւն։

Երբէք չէ եղած որ Օտեան պատրաստուած խօսի. միշտ յանպատրաստից արտասանած է իւր ճառեր, որ անտիպ – ինչո՞ւ չըսենք նաև տպեալ – Ատենադրութեանց դրեթէ գլխաւոր փառքը կը կազմեն։

Եւ այդ փառք անշուշտ Հայ–ազգին կը վերաբերի։

Հաստատելու համար թէ մեր այս գրածին մէջ չափազանցութեան հետք անգամ չկայ, բաւական կը համարինք ըսել թէ հեռաւոր վայրերէ և ազգային ամեն յարանուանութենէ բազում նշանաւոր անձինք զինքը լսելու կուգային։

(Շարունակելի)

## ԶՄԻՒՌՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

10ը տարիէ աւելի ժամանակէ հետէ տրտունջ ու գանգատներ կը լսուէին տեղւոյն Ս. Առաջնորդին նկատմամբ, և այդ տրտունջ ու գանգատներ ընդարձակօրէն կը հրատարակուէին Թէրճիմանը-Էֆքեարի (այժմ Ճերիտէի–Շարգիյէ), այլոց և ապա հանգուցեալ Արշալոյս–Արարատեանի մէջ։

Արշալոյս գոհացաւ. իսկ Ճերիտէ փոխեց իր լեզուն, բայց անդ – յիշեալ – իրերը բնաւ չփոխուեցան, նեխելով բորբոքեցան, և այժմ խիստ ծանր կերպարան առած լինել կը թուին, որովհետև, ինչպէս կ'երևայ անցեալ ուրբաթ (օգոստ. 28) աւուր Արևելքի մէջ Իզմիրէն առ Պատրիարքարան ուղղեալ 300 ստորագրութեամբ հանրագիր մը պատճէնէն, գանգատներ և դժգոհութեան առիթ տուող պատճառներ դժբաղդաբար բազմացած են։

Յիշեալ հանրագիր ընդդէմ Ս. Առաջնորդին կը պարունակէ այնպիսի ծանր ու գայթակղական ամբաստանութիւններ, որոց անհիմն կամ չափազանցութիւն լինելուն փափագող լինելով հանդերձ՝ չենք կրնար ոմանց նման անճապարել ըսելու համար թէ նոյն 300 ստորագրողք անփորձ, չարասէր ու զրպարտիչ անձինք են։

Այսպիսի մեծ մ'յետ քննութեան ձեռնհաս ատեանը միայն կրնայ տալ, բայց Ճերիտէ ոչ երբէք. ուրիշ բան է եթէ ինք նկրտելութիւն ունեցած է։

Ստորագրողաց մէջ կը գտնուին ընդհանուր յարգանաց և վստահութեան արժանի խիստ պատուաւոր անձինք, որ, որ և իցէ պարագայի մէջ հաւատալի չէ թէ զիջանին անմեղ մը զրպարտել, դատել ու խարդաւանել։

Ինչ դիւրին բան է որ յիշեալ 300 անձինք քնացնելով իրենց խիղճը, սիրտն ու զգացումները՝ միաբանին զրպարտել, դատել ու խարդաւանել եկեղեցւոյ բարձրաստիճան պաշտօնեայ մը, ինչպէս է Գեր. Մելքիսեդեկ։

Եւ ինչո՞ւ միաբանին զրպարտելու, դատելու և խարդաւանելու համար եկեղեցական մը, որ կարող չէ և չկրնար նիւթական որ և է թեթև կամ ծանր վնաս մը պատճառել և վիշտ ու չարիք հասցնել մանաւանդ Զմիւռնիոյ պէս տեղ մը։

Ուստի, թեթևութեամբ չենք կրնար ըսել թէ 300 ստորագրութեան տէրերը անփորձ, զրպարտիչ ու չարասէր անձինք են, որովհետև իրենց հանրագրութեան պարունակութիւնը սուտ, անհիմն և զրպարտութիւն է։

Հանրագիրը կը պարունակէ գայթակղական այնպիսի ծանր կէտեր, որոնք կը հետևի թէ դժբաղդաբար սուտ, անհիմն և զրպարտական են ըսելու տեսակէ չեն, որովհետև կան ասոնցմէ որ հրապարակի վրայ կեցած իրողութիւններ են։

Այդ կարգէ են Շահպազեանի և յիշատակութեան խնդիրները, որոց հեղինակ և

# ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

## ԱՄՈՒՍՆԱԹՈՂԱԿԱՆ

( 11 Թուէն )

Ահա վերջապէս քու նպատակիդ հասնելու համար ամեն բան ըրիր, ամեն անարգ միջոց 'ի գործ դրիր, բայց ես համբերեցի, աղաչեցի, պաղատեցայ, որպէս զի գթաս գո՛նէ զաւակացս, սակայն դուն ոչ գութ ունիս, ոչ խիղճ եւ . . .

—Լեզուդ քաշէ, եթէ ոչ հիմա դարձեալ... կը հասկնաս ա՛ . . .

—Այո՛, այո՛, լեզուս պիտի քաշեմ բոլորովին, ա՛լ զիս չպիտի տեսնես.

—Իրա՞ւ կ'ըսես.

—Հինալանմիշ եղիր.

—Որի համար.

—Որի համար որ կուզես, միթէ պակա՞ս են. գնա՛ հանգիստ եղիր.

—Ուրեմն հրաման կուտաս.

—Թո՛ղ զիս, լաւ այլ եւս.

—Ես չեմ թողուր.

—Ձես թողուր. հա՛, հա՛, հա՛.

—Երթա՞լ կուզես, անպատճառ երթա՞լ կուզես.

—Պահէ այդ հեգնութիւններդ որ օր մը քեզի համար պէտք կ'ըլլան.

—Քեզ չեմ հեգներ, ինչո՞ւ հեգնեմ, հոգիս.

—Ես քու հոգիդ չեմ.

—Ատանկ բան մ'ըսեր, սիրտս կըտոր կտոր կ'ըլլայ, աչքիս լոյսը.

—Ինծի բեյազ պէտքը չէ, անոր ըրէ.

—Ա՜նո՛վ է.

—Բաւական է, բաւական.

—Կուզես որ սէրս չյայտնե՞մ.

—Սէ՞ր.

—Այո՛, սէր.

—Ատելութիւն ըսէ, ատելութիւն.

—Ատանկ ճիչեր կտրտուկ խօսքեր մ'ըներ, իմ սիրտս չդիմանար.

—Հաւտացի.

—Իրա՞ւ կ'ըսես.

—Ձէ՛, սուտ.

—Հա, սանկ ըսէ.

—Մայթայ չուզեր.

—Սիրունի՛կս, հիմա հոս մայթայի բան կա՞յ. տես վրադ ո՛րչափ կը գուրգուրամ.

—Դիտես քի իրաւ է.

—Հապա, հապա.

—Ես ալ կ'ելեցի.

—Կամաց, կոկորդդ չկայնի.

—Ինչպէս, աղէկ էյլէնմիշ կ'ըլլաս կոր.

—Ո՛չ. քեզ էյլէնտիրմիշ կ'ընեմ կոր.

—Ո՛չ, ինծի էյլէնտիրմիշ ընել պէտք չէ. անիկա, անոնք էյլէնտիրմիշ ըրէ.

—Դուն անոնց վրայ մի՛ մտածեր, աղուորիկս.

—Ես ոչ աղուոր եմ և ոչ աղուորիկ, աղուորիկներդ անոնք են, ես տգեղ եմ.

—Տգե՞ղ, ի՛նչ կ'ըսես. թէ որ տգեղ ըլլայիր 'նէ քեզի հետ կ'ամուսնանա՞յի.

—Ինծի հետ չամուսնացար, ոսկիներուս հետ ամուսնացար.

—Ատիկա քու պօշ փէսփէսէդ է,

—Պօ՛չ . . .

—Կատակը մէկդի. հիմա իրաւ պիտի երթա՞ս.

—Կատակը ի՛նչ է.

—Ես պիտի թողո՞ւս.

—Դուն ես արդէն թողուցեր ես.

—Նայէ ի՛նչեր կ'ըսես.

— Ջրպարտութիւն կ'ընեմ կոր, այնպէս չէ՞.

—Դուն կ'ըսես կոր. բայց չխտակ ըսէ, ես պիտի թողո՞ւս, պիտի երթա՞ս ասկէ, ե՞րբ պիտի երթաս, այսօ՞ր պիտի երթաս, կամո՞ւս պիտի երթաս, կերակուր ուտես անա՞նկ պիտի երթաս, ի՞նչ պիտի հագնիս երթաս, առանց մտաբարով ըսելո՞ւ պիտի երթաս, ըսէ, հոգիս, խուհիս, խուհիս, խուհիս, պիտի երթաս, հէ՛.

(Շարունակելի)

## ՄՐՑԱՆԱԿԱՐԱՇԽՈՒԹԻՒՆ

Ազգային վարժարանաց մրցանակաբաշխութեան հանդէսները՝ որ փայլուն նախշուն, պլպլուն և շողշողուն կերպով կը կատարուէին և խօսելու հաւէսքեռներուն առիթ կը մատակարարէին՝ վերջացան.

Հիմա կարգը եկաւ ազգային գործիչներուն մրցանակարաշխութեան հանդէսին, որ կը կատարուի Կիրակնօրեայ Հայրենիքի մէջ:

Ա. Մրցանակ Արեւելքին. — Պատկեր կափպալտին, որ ճիզութները հալածելու մէկհատիկ հմայեկն է:

Ա. Մրցանակ Մասիսին. — Արեւելքի կոմիտեան հաչակաւոր Գլխարկ-Թըլթակցին պատասխանը՝ վասն ծակամտ և զոսկերս ջարդ ու փշուր առնելոյ երեւելի ու աներեւոյթ գործչաց՝ որ ալ Արեւելք ոչ գործեն.

Ա. մրցանակ Ծերիտէի-Շարժիչին. — Երկու դէմք, որպէսզի մէկով Հայ և միւսով կաթոլիկ Պատրիարքարանին նայի:

Ա. Մրցանակ Մէճմուայը-Հաւատիսին. — Հէյրէ մը միութեան բրօժէ. որ հաւնի հաւնի ու մէջէն հանածը ծախէ:

Ա. Մրցանակ օրական Հայրենիքին. — Ամսական 5 ղրշ. ի 1000 բաժանորդ, եթէ չ'օգտէ՝ 1000 տուգա:

Ա. Մրցանակ Աւետաբերին. — 1 Տիրոջ ղրօտարան:

Ա. Մրցանակ Մանզումէին. — Կոլինճ մը թուք երեսին:

Ա. Մրցանակ Արեւելեան-Մամուլին. — Ս. Զմիւռնիոյ կաթողիկոսին անդրանիկ օրհնութիւնը:

Ա. Մրցանակ Ս. փախաղեան էֆէնտիին. — Մայր վարժարանի Տեսչութիւնը:

Ա. Մրցանակ Յ. Գուրգէն էֆէնտիին — 1 Օրինակ Արեւելք և 1 օրինակ Մասիս:

Ա. Մրցանակ Ն. Գարագաշ էֆէնտիին. — 1 Օրինակ Վ. Մարգարեանի քերական:

Ա. Մրցանակ Ռ. Պուլկուրեան էֆէնտիին. — Կամպէդ-դայի լեզուն:

Իսկ Կիրակնօրեայ Հայրենիքին. — Քանի մը հարիւր նոր բաժանորդներ:

## ԷՔՍԲՕԶԻՍԻՕՆ

Պիր գաչ կիւնտէն պէրի հիւքմ իտէն արճադլարտան եօլթրիւ, պիզիմ Մահուտ Մանզումէ ևինէ ագընալխիֆֆէթ կէլթիրէրէք, քէնտի 5907 նումէրօլու վարագրէրէսինտէ «Էքբօզիսիօն» սէրլէվալը պիր պէնտ եազմըշ տըր, քի քէնտի ախլէագընա բէք մուաֆըգ օլտուղու ալա իւրեար գարպուլ իթմէզ պիր սանհիհլիք իսէտէ, հալ պու քի եօյլէ պիր բէզիլ, քէպաղէ, մէքրուհ, ատի, պահասը վէ էտէպսիզլիքլէ մուղայիր պէնտ չըկմը, ալչագ վէ պահաղընըն պահասըղը օլսա, տէյիլ նէշր իթմէյէ, եազմախա տախի էլի իլէրի վարմազ.

Ֆագաթ, պու կիպի մուլահազալար Մանզումէ տէնիլէն մախլուգ իչին տէյիլ տիր, չիւնքի, նէ՛ ուլթանմաղը վար. նէ՛ արլանմաղը, նէ՛ զամիր, նէ՛ տղդասիյյութիւն, նէ՛ ախլէագի համիտէ, նէ՛ ինսանիյէթ, նէ՛ տին վէ նէ՛ տէ իմանը վար.

Նայընըզ զըրըլտագ մէքրուհ պիր գալէմի վար տըր քի, բէք չօգ վագըթ միլլէթին գանընը պաթըրըպ, քէնտի զամիրի կիպի պիր գաչ թագրդա քեարըպրըշ, կաղէթա խընկանըյլա մէյտանա չըգարմագտա տըր, քի բաշխալըա եէրինէ պիլէ եէլինէ ալմագ իչին ինսան իրթիքեապ իթմէզ, նէրտէ գալտը քի օգուսուն վէ կազէթա տէյի եէլինէ կէօթիւրսին:

զինքն կը նետէ ի տուն, ուր կը մնայ յանկողին և հոն երթալով կը հիւծի։ Աչնուհետև՝

Արհեստ բժշկին անօգուտ լինի,
Մեր ծնկլտորեան այսպէս ցաւալի,
Դեռ չաւարտած նա գարուն երեանի,
Հոգին աւանդէ չաւղով ողբալի,
Ուրեմն՝
Մի կարդ պարոնայց ականջ թող
                 խօսի,
Լինել չատ զգոյշ յայսմ օրինակի։

Կ. Պօլսոյ մեր վարժարանաց վերայ ընդհանրապէս խօսելու երբ առիթ ունենանք, յայնժամ հրապարակաւ և միանգամայն բաղում օրինակաւ ցոյց պիտի տանք թէ այդ նուիրական յարկերու տակ ինչ տեսակ զեղծումներ տեղի կունենան, որոց քով սպայինքն նշանակութիւն իսկ չունին և այս վարժարանաց վարիչներու անկարողութենէն, և ոմանց ևս նիւթական չահուց աւելի ամեն ինչ ներելի ընելու ԿՈՐԾԱՆԻՉ ընթացքէն։

ԱՆՈՒՇԱՒԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Երէկ, փոխանակ Ազգ. ժողովոյ՝ անձրև գումարեցաւ՝, որոյ օգտակարութիւնը ամենէն գնահատուեցաւ։

Փափաքելի է որ ամեն անգամ երբ երաշտութիւն տիրէ, Ազգ. ժողով հրաւիրուի, որպէս զի փոխանակ փափկամորթ և փափկամարմին երեսփոխան էֆէնտիներու՝ որ թէ տաքին, թէ անձրևուն, թէ ցուրտին և թէ ձիւնին չեն կրնար գալ, գոնէ բարեհաճի անձրև գալ։

Միւս կողմանէ, կ՚առաջարկենք այն ամեն անոնց՝ որ ընտրողական իրաւունք վայելելու պատիւ ունին, բարեհաճին ընտրել այնպիսի երեսփոխաններ որ ցուրտի, տաքի, անձրևի և ձիւնի դիմանան։

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԵՌԱԳԻՐ

յՍ.ւուր-ղալէր

Հանգիստուր Ասլու Լ էֆէնտին վարչապետութեան պաշտօնին պիտի կոչուի . . . եղեր։

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Ինչպէս որ ծանուցած էինք, անցեալ կիրակի օր մեծ չքով կատարեցաւ արտաքին գործոց նախարարութեան Քարտուղար–Թարգման Նիւլլապեան Վսեմ. Միքայէլ էֆէնտիի ամուսնութիւնն ընդ Աչնուա. Օր. Եւգինէ Սարաֆեանի (քոյր Մեծ. Գէորգ էֆէնտիի Սարաֆեանի որ Կայս. փոխրանոյի Համարակալութեան կարևոր պաշտօնը կը վարէ)։

Պսակադրութիւնը կատարուած է նախագահութեամբ Գիմաքսեան Գեր. Տ. Հմայեակ Ս. Եպիսկոպոսի, կնքահայրութեամբ Խորեան Վսեմ. Գրիգոր էֆէնտիի (որ արտաքին գործոց Վսեմ. Նախարարին կողմէ փոխանորդաբար կը կատարէր) և ՚ի ներկայութեան բարձրաստիճան պաշտօնէից և ընտրելագոյն երկսեռ բազմութեան։

Վսեմ. Նիւլլապեան էֆէնտի արդէն համրածանօթ է իւր գիրքով, ազնուութեամբ և աշխատութեամբը։

Նոյնպէս համբածանօթ է Սարաֆեան տոհմ Գերդաստանն իւր ազգասիրութեամբ ու կրթասիրութեամբը, և այսպէս՝ Աչնուա. Տիկին Եւգինէ Նիւլլապեան է ուսեալ և յոյժ բարեկիրթ։

Մեր ջերմ խնդակցութիւնն ու շնորհաւորութիւնները կը յայտնենք սիրակցորդ ամոլից և Նիւլլապեան ու Սարաֆեան Գերդաստաններու անդամոց։

ՊԱՏՈՒԱՆՇԱՆ

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ Կայս. պալատան բժիշկներէն Մեծ. Տօքթ. Մ. Բ. Իւթիւճեան էֆէնտիի Գ. կարգի Մէճիտիյէ պատուանշան շնորհել։ Իւթիւճեան էֆէնտի համրածանօթ է արդէն իւր բժշկական օգտակար հրապարակութիւններովը։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԸՐԷՆ ԼԵԶՈՒԻ

300է աւելի երեսներէ բաղկացեալ

Կեդրոնատեղին է Պօղճեան Գրատուն Զադմադճըլար եօգուշ, Սադա–Չէշմէի դէմ 56

Գին 7 Ղրուշ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ կիրակի օր Գատը-գիւղի եկեղեցւոյն մէջ ոլրացեալ Օսեանի հոգեհանգիստը կատարեցաւ ՚ի ներկայութեան Ամեն. Ս. Պատրիարք Հօր։ Նոյն օր յատկապէս պատարագեց Ամեն. Տ. Խրիմեան Սրբազան, ներկայ էր հոծ բազմութիւն մը։ — Նոյնպէս՝ նոյն օր Պարտիզակի եկեղեցին ալ հոգեհանգիստ կատարուեր է։

—Յառաջ ժողովը իւր վերջի նստին մէջ Չէյթունի հրկիզեալ եկեղեցեաց և այլ ազգային հաստատութեանց վերաշինութեան հոգ տանելու համար որոշած էր յանձնաժողով մը կազմել և իւր այս որոշման գործադրութիւնն յանձնած էր Ամեն. Ս. Պատրիարք Հօր։ Ն. Բարձր Սրբազնութիւն հետևեալ կերպիւ կազմած է յանձնաժողովը՝

Մեծ. Տեարք Կիւլպէնկեան Պատրիկ էֆէնտի, Յովակիմեան Միհրան էֆէնտի, Բարաղամեան Տիգրան էֆէնտի, Մանուկեան Մկրտիչ էֆէնտի, Սարգիսօֆ Սարգիս էֆէնտի և Թօփալեան Գէորգ էֆէնտի։

—Մեծաւ բերկրութեամբ կը ծանուցանենք թէ աջակցութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և Ունճեան Վսեմ. Արիկ էֆէնտիի ձեռնարկուած է Իւսկիւտարի հրկիզեալ Ս. Կարապետ եկեղեցւոյ վերաշինութեան։

—Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Զմիւռնիոյ Գաւառական ժողովն Ազգ. Երեսփոխան ընտրած է Աչնուա. Կիւլպէնկեան Պատրիկ էֆէնտին։

— Վսեմ Ասպեան Ջանդ այս չորեքշաբթի օր Ազգ. Հիւանդանոցի պատրաստելոյ ճաշ սեղան մը տուաւ։

Ն. Վսեմութիւն իւր ամուսնութեան 25 րորդ տարեդարձին առթիւ տուած է նոյն ճաշը՝ — կը փափաքինք որ այս գովելի գործ հետևողներ ունենայ։

— Մեծապէս գոհ ենք որ Արժ. Վահան վարդապետ Տ. Մինասեան յաջողեր է կրէտէի Ազգ. կալուածներն ապահովել վասնգէ իւր գործունէութեամբը։

— Տիգրանակերտէն ընդունած ենք դարձեալ ընդարձակ նամակ մը, որ կէ կը քաղենք հետևեալ տեղեկութիւնները։

«Իրաւամբ մեծ բան կը յուսայէր Մխիթարեան Գեր. Խորէն Սրբազանի հոս ներկայութենէն, բայց կ՚երևայ թէ ինք ևս ժողովրդականութեան դիմակին ներքև գանուողներուն ազդեցութենէ չէ ազատած՝ անչուչտ հակառակ իւր բարի կամեցողութեանը։ Գեր. Գերձակեան Սրբազանի օգտակար տընօրէնութիւնները ոչնչացան։ Գիւղացիք չարաչար կը տառապին երաշտութեան երեսէ, կը նեղուին պարէնի համար և միայն այս պատճառաւ է որ կը փորձուին կաթոլիկութեան դիմել ճիլլիթներէ օգնութիւն վայելելու յուսով։ Ցաւալի է անչուչտ որ Գեր. Խորէն Սրբազան չկրցաւ այս մասին գարման տանիլ։ Հոս կ՚ըսեն որ եթէ Մի-

# ԻՍՄԱՆ
ԿԱՄ
## ՏԱՃԿԵՐԷՆ ՄՏԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ

Տէր եւ Հրատարակիչ
ՀԱՅ ԳՐԱՇԱՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Սոյն տաճկերէն ընթերցանութեան գիրքն որ երեք մասէ կը բաղկանայ, հռչակաւոր Թուրք գրագէտ և Օսմանեան բարձրագոյն վարժարանաց ուսուցիչ Ալի Նազիմ Պէյի կողմէ պատրաստուած է ըստ Բէլլոնէի դրութեան, և որոյ առաջին մասին տպագրութիւնն արդէն սպառած ըլլալով, երկրորդ տպագրութեան արժանացած է կարեւոր յաւելուածով, այն է՝ դժուարին բառերուն բացատրութեամբ։

Սոյն դասագիրքն արդէն Օսմանեան, Յունական և Հայկական վարժարանաց մէջ մուտ գտած է գնահատուելով նոյն կրթական տեսչութիւններէն, և գոհութեամբ կը յիշատակենք թէ մի կրթական Տեսչութիւնն ևս արժանաւոր գնահատելով և Պատրիարքարանի կոնդակով ներմուծուած է դպրոց ընտրելոց դասագրոց մէջ, իբր Օսմանեան ընթերցանութեան մէկ հատուկ դասագիրք մը։

Գինն է Ա. մասին 2 ղրշ. Բ. Մասին 2 ու ղրշ. և Գ. մասին 3 ղրշ.

Տպագրութիւն յոյժ մաքուր։
Ազգային վարժարանաց համար հարիւրին 20 զեղչ կըլլայ։

## ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Ընդդէմ գիջական, գաղղիական (Փրէնկի) միզանցքաբորբոքային (պէլ սօուգլուգու) և այլ ախտադիտական հիւանդութեանց։

ԳԻՆ 6 ՂՐՈՒՇ

Կեդրոնատեղին է Պօղաճեան դրատուն. Զագմաք ճըլար-եօղուշ, թ. 56.

Սոյն առողջարանական գործն իբր բազմօգուտ և հետաքրքրաշարժ պարունակութեամբ կը գերազանցէ ցարդ այս նիւթիս վրայ հրատարակեալ հին գործերն, (օրինակի համար Հայկունիի և Պաղտասարեանի (Աչեան տերեները, Գերեզմանք երիտասարդաց, Գաղտնիք Բնութեան այլովքն հանդերձ) այնպէս որ այդ կրկառոր գրքերը կարդալու փոխարէն, եթէ կարդայ Ինքնապաշտպանութիւնն, ոչ ևս պէտք պիտի զգայ անոնց։

Գաւառներէն ո՛վ որ 7 ղրուշի թղթատարական դրոշմ ղրկէ, յաջորդ փոստով անմիջապէս կ՚առնայ մի օրինակ։

ՊԱՐԳԵՒԱՒՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

## ԲԱՐԻՍ ՓԱՃԻԱԼԱՐԸ

Թարգմանիչ Յ. ԹՕԼԱՆԵԱՆ — Հրատարակիչ Կ. ՊԻՊԵՐԵԱՆ

Այս հետաքրքրական վէպին առաջին հատորը ի լոյս ընծայուած ըլլալով՝ երկրորդին հրատարակութեանը ձեռնարկուած է. ամսական բաժանորդագինն է Պոլսոյ համար 5 և գաւառաց համար 6 դահեկան։ Բաժանորդագրուիլ փափագողք պարտին դիմել Նուռուօսմանեան խան վերնայարկ թիւ 6 Կ. Պիպէրեան էֆէնտիի տպարանը, Պահճէ գաբու սուճի Պօղոս և Յակոբ աղայից խանութները և ամեն լրագրավաճառաց։



Տնօրէն եւ Խմբագիր Մ. ԴԱՓԱՄԱՃԵԱՆ — Արտօնատէր Մ. Յ. ՄԵԼԻՔԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. ՊԻՊԵՐԵԱՆ
Նուռուօսմանեան խան վերնայարկ թիւ 6


— 445 —

գիտես թէ որդւոյս մին օժտելու համար միւսն ժառանգութենէ չեմ կրնար զրկել։ Անհաւանելի պատմեմ քեզ եղածը. Մարիամ առանձնութիւնն նախամեծար կը համարի ընկերական կեանքէն, քիչ յառաջ մայրն իրեն հետ ընդերկար խօսած է, և կը խոստովանիմ թէ շատ կը ցաւիմ այս բանիս վրայ — նա որոշած է վանք մտնալ։ Աղերսի իր մայրն միայն մնալով մեզ օժտել. կրնանք թէպէտ նեղուելով Օռէլիի ութ հարիւր հազար ֆրանք տալ առանց իր քրոջ դէմ անարդարութիւն մը ըրած ըլլալու, ինչպէս կը տեսնես։

—Սակայն, եղբայր, կեցիր որ դիտողութիւն մը ընեմ. Մարիամ ընաւ՝ վանք մտնալ չուզեր, բացարձակապէս կը մերժէ զայդ։

—Ինչ կըսես։

—Քիչ յառաջ, արտասուագին տխուր յայտնութիւն մ՚ըրաւ ինձ Մարիամ զոր իր մօրն ընելու չէր համարձակած. Մարիամ ըսաւ ինձ թէ մայրն բռնադատած էր զինք վանք մտնալ, բայց ինք ընաւ չը պիտի զիջանէր յայդմ։

—Աւրը՛. — գոչեց տիկին Ժուֆրուա. — կը համարձակի . . .

— 448 —

ըսելու ինձ թէ՝ միայնակ չահեցար մեր հարստութիւնն։ Կը համարձակի՞ք այնպիսի ամբաստանութեան մը խօսիլ բերան առնուլ որ մեր աղջկան երջանկութիւնն կ՚ապահովէ . . . Է՛ նայինք, զգուշացիր, պարո՛ն, զգուշացիր։ Թողը պատուել մի տար ինձ, կ՚աղաչեմ, ինչպէս յաճախ կրկնած ես ինձ, քսան և հինգ տարիէ ՚ի վեր արքայութիւն մ՚է եղած, բայց եթէ յաճախակի կրկնես այսօրուան ըրածներդ, դժոխք մը կը դարձնեմ, գիտնաս։

—Ի՛հ, կը հաւատա՛մ . . . կը հաւատամ . . . — պատասխանեց ազնիւ մարդն արտասուելով. — առաւօտուընէ ՚ի վեր կրած ցնցումս ես գիտեմ միայն քիչ մնաց խելքս պիտի կորսնցնէի, և եթէ վերստին սկսիս, այս անգամ բոլորովին կորսնցնել տաս պիտի զայն . . .։ Այդ անիծեալ օժտի մասին ինձ հետ վիճաբանած միջոցիդ ինչպէս որ քունքս կը դարնէիր, որ հիմայ ալ նորէն սկսա՛ւ։

—Օ՛ն, եղբայր իմ, արութիւն ունեցիր կամ մանաւանդ, յանձնառու եղիր. — պատասխանեց հօրաքոյր Բուխուանս տիրագին։ — Գիտեմ, չես կրնար մաքառիլ այն իշխանութեան դէմ որ քսան և հինգ տարիէ հետէ